ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-26/26-IS/INSTHIST

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

29 դեկտեմբերի 2025թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Աշոտ Աղասու Մելքոնյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 294 843 200 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,

2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 294 843 200 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀԿՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24 /4 Հ/հ՝ 900018005281 ՀԿՀՀ՝ 00008037 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ (ստորագրություն) Կ. Տ. Կարեն Բորիսի Ղարիբյան	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ (ստորագրություն) Կ. Տ. Աշոտ Աղասու Մելքոնյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Աշոտ Մելքոնյան

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-26/26-IS/INSTHIST պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Աշոտ Աղասու Մելքոնյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-26/26-IS/INSTHIST պայմանագրի գնի վերաբերյալ՝ 294 843 200 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

(ստորագրություն) Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն) Կ. Տ.

Աշոտ Աղասու Մելքոնյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-26/26-IS/INSTHIST պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՍԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	30
Այլ պարբերականում հրապարակում՝	150
Գրքեր, մենագրություններ՝	15
Գիտաժողովի նյութեր՝	25

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Աշոտ Աղասու Մելքոնյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Սուրադյան Հակոբ Ղարիբի
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-26/26-IS/INSTHIST պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	283 860 672	56 772 134	70 965 168	70 965 168	85 158 202
2.	տնտեսական ծախսեր՝	5 430 000	1 086 000	1 357 500	1 357 500	1 629 000
3.	այլ ծախսեր՝	5 552 528	1 110 505	1 388 132	1 388 132	1 665 759
Ընդամենը՝		294 843 200	58 968 639	73 710 800	73 710 800	88 452 961

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Աշոտ Աղասու Մելքոնյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Կարինե Շամխորի Ստեփանյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-26/26-IS/INSTHIST պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

<< դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**5 430 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 970 000
2.	*գազի ծառայություն*	890 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	770 000
4.	*կապի ծառայություն*	950 000
5.	*աղբահանություն*	120 000
6.	Տնտեսական ապրանքներ և նյութեր	730 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**5 552 528**
1.	Գործուղումներ	1 500 000
2.	Գիտաժողովների կազմակերպում	970 000
3.	Սարքեր, սարքավորումներ	900 000
4.	Այլ ծախսեր	2 182 528

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Աշոտ Աղասու Մելքոնյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Կարինե Շամխորի Ստեփանյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-26/26-TS/INSTHIST պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն» *ծրագրի)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Հայոց պատմության, համաշխարհային պատմության համատեքստում Հայաստանի և հայության հարցերի քննությունը մշտապես գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում:

Պատմության ինստիտուտը պատմագիտության տարբեր հարցերի ու ժամանակաշրջանների ուսումնասիրության վերաբերյալ իրականացրել է մեծ ծավալի աշխատանք: Կատարված աշխատանքներն որքան էլ շոշափելի են, այնուամենայնիվ բավարար չեն, և շատ հիմնախնդիրներ նորովի ուսումնասիրման կարիք ունեն:

Հայոց պատմության զանազան հարցերին նվիրված պատկառելի ժառանգությունն անհրաժեշտ է ներկայումս ի մի բերել և գիտական հանրությանը ներկայացնել քաղաքական կապանքներից ազատված ու անաչառ գիտության դիրքերից: Անհրաժեշտ է նաև շարունակել ուսումնասիրությունները Հայաստանի և հայության ավանդի վերաբերյալ համաշխարհային պատմության համատեքստում:

Ծրագրի իրականացման արդյունքում լույս կտեսնեն հայոց և համաշխարհային պատմության տարբեր հիմնախնդիրներին նվիրված հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ, գիտաժողովների ժողովածուներ, մենագրություններ, հուշագրություններ, աղբյուրագիտական ժողովածուներ և յալ բնույթի աշխատություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Խիստ անհրաժեշտ է ծրագրի կատարմանը մասնակից դարձնել երիտասարդ կադրերի, գիտական սերնդափոխություն իրականացնելու համար: Ուստի նպատակահարմար է ծրագրի շրջանակներում հատկացնել ասպիրանտուրայի առնվազն 3 տեղ:

Աշխատանքն ավելի արդյունավետ իրականացնելու հիմնական դժվարությունն արտերկրի արխիվներից և գրադարաններից օգտվելն է: Անհրաժեշտ է նաև ինստիտուտի աշխատակիցներին հնարավորություն տալ ՀՀ արխիվներից փաստաթղթերի պատճենահանումը կատարել անվճար հիմունքներով, ինչպես նաև տրամադրել թվային տարբերակները:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հայագիտության մեջ մեծ կարևորություն ունեցող այս ծրագրի կատարումը կիրականացվի հետևյալ թեմաներով՝

- Հայ ժողովրդի ձևավորումը և կազմավորումը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներում
- Հայոց հին պետականությունների պատմություն (մ.թ.ա հնագույն ժամանակներից մինչև 4-րդ դար)
- Հայոց միջնադարյան պետականությունների պատմություն
- Հայ ազատագրական պայքարը հին և միջնադարյան Հայաստանում
- Ազատագրական պայքարը և Հայ Առաքելական եկեղեցին
- Հայոց պետականությունը և Հայ Առաքելական եկեղեցին
- Հայ ազգային-ազատագրական շարժումները 17- 20-րդ դարի սկզբին
- Հայկական հարցի պատմություն
- Հայերի զեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1878-1923 թթ.
- Հայկական կուսակցությունների պատմություն (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ)
- Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր
- Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920 թթ.)
- Խորհրդային Հայաստանի պատմություն (1920-1991թթ.)
- Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին (1939-1945թթ.)
- Հայ գաղթավայրերի և սփյուռքի հիմնախնդիրներ
- Հայ հասարակական մտքի և հայ պարբերական մամուլի պատմություն
- Հայաստանի երրորդ Հանրապետություն պատմություն
- Արցախյան ազգային-ազատագրական պայքարի և Արցախի հանրապետության պատմություն
- Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն
- Էթնոժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն
- Հայաստանը և հայությունը համաշխարհային պատմության համատեքստում
- Պատմագիտության տեսական հարցեր
- Առօրեականության պատմություն
- Հայոց աղբյուրագիտություն և պատմագրություն

Կազմակերպության տնօրեն՝ _____ Աշոտ Մելքոնյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Աշոտ Մելքոնյան

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025 թ.
N 1-26/26-25/I N STH/15 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

««Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.», «Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն», «Աղբյուրագիտություն և պատմագրություն»» ծրագրի

հ/հ	անվանումը	Իրականացվելիք միջոցառման համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	***«Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.»***	• Հայ ժողովրդի ձևավորումը և կազմավորումը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներում • Հայոց հին պետականությունների պատմություն (մ.թ.ա հնագույն ժամանակներից մինչև 4-րդ դար) • Հայոց միջնադարյան պետականությունների պատմություն • Հայ ազատագրական պայքարը հին և միջնադարյան Հայաստանում • Ազատագրական պայքարը և Հայ		03.01.2026-30.12.2026

* *Իրականացվելիք միջոցառումներ ներկայացնել եռամսյակային փուլերով:*

		Առաքելական եկեղեցին • Հայոց պետականությունը և Հայ Առաքելական եկեղեցին • Հայ ազգային-ազատագրական շարժումները 17-20-րդ դարի սկզբին • Հայկական կուսակցությունների պատմություն (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ) • Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր • Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն • Էթնաժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն • Հայաստանը և հայությունը համաշխարհային պատմության համատեքստում • Պատմագիտության տեսական հարցեր • Առօրեականության պատմություն	
2	***«Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն»***	• Հայկական հարցի պատմություն • Հայերի ցեղասպանությունն	03.01.2026-30.12.2026

Օսմանյան կայսրությունում 1878-1923 թթ.

- Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր
- Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (1918-1920 թթ.)
- Խորհրդային Հայաստանի պատմություն (1920-1991թթ.)
- Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին (1939-1945թթ.)
- Հայ գաղթավայրերի և Հայկական սփյուռքի հիմնախնդիրներ
- Հայ հասարակական մտքի և հայ պարբերական մամուլի պատմություն
- Հայաստանի երրորդ Հանրապետություն պատմություն
- Արցախյան ազգային-ազատագրական պայքարի և Արցախի հանրապետության պատմություն

		• Հայոց զինուժի, հայկական բանակի պատմություն • Էթնոժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն • Հայաստանը և հայությունը համաշխարհային պատմության համատեքստում • Պատմագիտության տեսական հարցեր • Առօրեականության պատմություն	
3	***«Աղբյուրագիտություն և պատմագրություն»***	Ներկայացված ծրագիրը բաղկացած է երկու թեմաներից՝ ա/աղբյուրագիտություն և բ/ պատմագրություն	03.01.2026-30.12.2026

Կազմակերպության տնօրեն՝ _____ Աշոտ Մելքոնյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Աշոտ Մելքոնյան